Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1420 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և պաշտոնային դրույքաճափերի հաշվարկման գործակիցների փոփոխության անհրաժեշտությունը գնահատելու, ինչպես նաև դրանց չափերի վերաբերյալ առաջարկություններ մշակելու նպատակով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին) յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ իրականացնում է՝ ըստ մասնագիտությունների և տարածքների աշխատանքի շուկայի վերլուծություն:

2. Լիազոր մարմինն ըստ մասնագիտությունների և տարածքների աշխատանքի շուկայի վերլուծության իրականացման համար, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N - Ն որոշման N 2 հավելվածով նախատեսված ձևաչափին համապատասխան, հավաքագրում է տեղեկատվություն պետական բոլոր ծառայողների (բացառությամբ զինծառայողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների) աշխատավարձերի չափերի, շարժի և հոսունության, պետական ծառայությունում կրկնվող թափուր աշխատատեղերի (թափուր մնալուց և մրցույթ հայտարարելուց հետո՝ առնվազն մեկ տարի չհամալրված պաշտոնների) մասին:

3. Լիազոր մարմինը սույն կարգի 2-րդ կետում նշված տեղեկատվության և համապատասխան տվյալների հիման վրա ներդնում և վարում է տեղեկատվական շտեմարան:

4. Լիազոր մարմինը սույն կարգի 2-րդ կետում նշված տեղեկատվության վերլուծության արդյունքում՝ հաշվարկում և (կամ) գնահատում է հետևյալ ցուցանիշները՝

1) պետական ծառայության համակարգում գերիշխող մասնագիտությունները և միջին աշխատավարձը՝ ըստ գերիշխող մասնագիտությունների, այդ թվում՝ ըստ ծառայությունների.

2) միջին աշխատավարձը պետական ծառայության համակարգում.

3) միջին աշխատավարձը՝ ըստ պետական ծառայությունների.

4) միջին աշխատավարձը պետական առանձին ծառայություններում՝ ըստ պաշտոնների խմբերի.

5) պետական ծառայողների շարժի և հոսունության մակարդակները.

6) ըստ մասնագիտությունների՝ կրկնվող թափուր աշխատատեղերը:

5. Լիազոր մարմինը, անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայից ստացված տվյալների հիման վրա ուսումնասիրում և վերլուծում է ոչ պետական հատվածի առնվազն 2000 կազմակերպություններում (յուրաքանչյուր մարզից՝ միջինը 100 և Երևան քաղաքից՝ 1000)՝ պետական ծառայության համակարգում գերիշխող մասնագիտություններով աշխատողների աշխատավարձերի չափերը:

6. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված վերլուծության, ինչպես նաև պետական ծառայության համակարգում գերիշխող մասնագիտություններով՝ պետական ծառայողների և ոչ պետական հատվածի աշխատողների աշխատավարձերի համեմատական վերլուծության արդյունքում, լիազոր մարմինը, ըստ պետական ծառայության համակարգում գերիշխող մասնագիտությունների, հաշվարկում է աշխատավարձերի նվազագույն, միջին և առավելագույն մակարդակները և գնահատում առկա շեղումները՝ հաշվի առնելով նաև պետական և ոչ պետական հատվածներում միևնույն մասնագիտությամբ աշխատողների կողմից զբաղեց-

ված պաշտոնների համադրելիությունը, աշխատանքային ծանրաբեռնվածությունները (աշխատաժամանակի ռեժիմները):

7. Սույն կարգի 6-րդ կետով նախատեսված վերլուծության շրջանակներում գնահատվում է նաև նվազագույն, միջին և առավելագույն աշխատավարձեր ստացող աշխատողների թվի տեսակարար կշիռը՝ համապատասխանաբար ուսումնասիրվող աշխատողների ընդհանուր թվի մեջ:

8. Լիազոր մարմինը սույն կարգի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված վերլուծությունների և գնահատումների արդյունքներն ամփոփելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հետևյալ առաջարկությունները՝

1) պետական պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափի բարձրացման և (կամ) հիմնական աշխատավարձի չափը որոշող գործակիցների փոփոխության վերաբերյալ.

2) համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված՝ առանձին մասնագիտությունների համար հիմնական աշխատավարձի (բազային աշխատավարձի ու գործակցի արտադրյալի) նկատմամբ տոկոսային ավելացում կիրառելու անհրաժեշտության և դրա չափերի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1420 - Ն որոշման

Ձև N 1

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Ծառայության տեսակը	Ստորաբաժանումը	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի խումբը	Պաշտոնի զբաղվածության բնույթը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Սեռը	Կրթությունը	Մասնագիտությունը՝ ըստ		Դասային կամ դիվանագիտական աստիճանը կամ կոչումը	Աշխատանքային ստաժը				Հիմնական և լրացուցիչ աշխատավարձը՝ հաշվետու տարվա մարտ ամսվա դրությամբ (հաշվարկված)								Պարգևատրումը (նախորդ տարվա)		
												տվյալ պաշտոնում			տվյալ պետական ծառայությունում, տարի	պաշտոնային դրույքաչափը	հավելավճարը	հավելումը					ընդամենը (12.1+12.2+12.3.1+12.3.2+12.3.3+12.3.4+12.3.5)			
									կրթության	պաշտոնի անձնագրի		տարի	ամիս	օր			Դասային կամ դիվանագիտական աստիճանի կամ կոչման համար	առողջության համար վնասակար, ծանր կամ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքի համար	բարձր լեռնային վայրերում աշխատելու համար	ծառայության առանձնահատկություններով պայմանավորված	արտաժամյա, գիշերային կամ հանգստյան կամ տոնական օրերին աշխատանքի համար	պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին առնչվելու համար		կատարողականի հիման վրա (նախորդ տարվա 1-ին և 2-րդ կիսամյակների համար)	հատուկ առաջադրանքների կամ աշխատանքի որակյալ կատարման համար	այլ դրամական պարգևներ
	1	2	3	4	5	6	7	8	9.1	9.2	10	11.1	11.2	11.3	11.4	12.1	12.2	12.3.1	12.3.2	12.3.3	12.3.4	12.3.5	12	13.1	13.2	13.3
1.																										
2.																										

Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԻ ԵՎ ՀՈՍՈՒՆՈՒԹՅԱՆ, ԿՐԿՆՎՈՂ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը (մարդ)
Ա	Բ	1.
1.	Պետական ծառայողների թիվը՝ նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ	
2.	Աշխատանքի ընդունվածների թիվը՝ հաշվետու տարվա կտրվածքով՝ առանց ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնողների	
3.	Աշխատանքից ազատվածների թիվը՝ հաշվետու տարվա կտրվածքով՝ առանց ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնողների՝	
	այդ թվում՝ ըստ պատճառների	
3.1.	անձնական դիմումի համաձայն, այդ թվում՝ ըստ պաշտոնների խմբերի՝	
3.1.1.	բարձրագույն	
3.1.2.	գլխավոր	
3.1.3.	առաջատար	
3.1.4.	կրտսեր	
3.2.	օրենքով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը	
3.3.	ատեստավորման արդյունքները	
3.4.	հաստիքների կրճատումը	
3.5.	ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալը	
3.6.	քաղաքական կամ հայեցողական պաշտոններում ընտրվելը կամ նշանակվելը	
3.7.	պետական ծառայության պաշտոնի նշանակվելը՝ օրենքով սահմանված կարգի խախտմամբ	
3.8.	պետական ծառայողի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը	
3.9.	պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալը	
3.10.	փորձաշրջանը չանցնելը	
3.11.	վերակազմակերպման հետևանքով նշանակում չկատարելը	
3.12.	կադրերի կարճաժամկետ ռեզերվից արտամրցութային կարգով քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնում նշանակելը	
3.13.	մահվան պատճառով	
4.	3-րդ տողից՝ պետական ծառայության այլ մարմիններ տեղափոխվածների թիվը	
5.	Պետական ծառայողների թիվը՝ նախորդ տարվա դեկտեմբերի 30-ի դրությամբ	
6.	Պետական ծառայությունում կրկնվող թափուր աշխատատեղերի (թափուր մնալուց և մրցույթ հայտարարելուց հետո՝ առնվազն մեկ տարի չհամալրված պաշտոնների) թիվը	
	այդ թվում՝ ըստ պատճառների	
6.1.	մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելը	
6.2.	թափուր պաշտոնի համար դիմող չլինելը	
6.3.	պաշտոնի անձնագրով պահանջվող մասնագիտությունը (անհրաժեշտ է նշել մասնագիտության անվանումը)	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ